



Ե վ ր ո պ ա կ ան Պ ա տ ա խ ան ա տ ու
Բնակապահովման Նախաձեռնություն

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲՆԱԿԱՊԱՀՈՎՈՒՄ ԿՄՊ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Որպես Պատասխանատու բնակապահովում տրամադրող՝ մենք Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՄՊ) սկզբունքները կընդգրկենք մեր գործարար ռազմավարության մեջ և դրանք կվերածենք կոնկրետ գործելակերպերի, որոնք մշտադիտարկվելու են կանոնավոր կերպով մեր գործընկերների հետ համատեղ:

Դա մեզ կօգնի ավելի պատշաճ կատարել մեր առաքելությունը՝ տրամադրելով մատչելի, որակյալ բնակարաններ ու ծառայություններ, որոնք բավարարում են բազմազան կարիքներ և այդ կերպ նպաստում են բնակիչների բարեկեցությանը, կյանքի որակի բարձրացմանը, իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանը և տեղական համայնքների կայուն զարգացմանը:

ԿՄՊ-ի հիմնական չափորոշիչներն են՝ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական կայունությունը, արդյունավետ կառավարումը և արդար հարաբերությունները շահագրգիռ կողմերի հետ, ինչպես նաև մարդկային ռեսուրսների պատասխանատու կառավարումը: Բնակապահովման բնագավառում դրանք վերածվում են հետևյալ հիմնական դրույթների:

ԿՄՊ-ի հիմնական չափորոշիչներն են՝ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական կայունությունը, արդյունավետ կառավարումը և արդար հարաբերությունները շահագրգիռ կողմերի հետ, ինչպես նաև մարդկային ռեսուրսների պատասխանատու կառավարումը: Բնակապահովման բնագավառում դրանք վերածվում են հետևյալ հիմնական դրույթների:

Տնտեսական պատասխանատվություն և կայունություն

- Կատարել կայուն ներդրումներ՝ ապահովելով ծախսարդյունավետություն և հավասարակշռելով մատուցվող ծառայությունների մակարդակը, դրանց հետ կապված ծախսերը, և թե որքանով կարող են այդ ծախսերն իրենց թույլ տալ ներկայիս և պոտենցիալ բնակիչները, այդ կերպ նվազեցնելով բնակարանի հետ կապված ծախսերը
- Բնակիչների հետ միասին փորձել ապահովել այն իրողությունը, որ էներգախնայողության միջոցառումները մեծացնում են ընդհանուր բնակարանային ծախսերի մատչելիությունը, ներառյալ էներգակիրների գները և բնակարանների հարմարավետությունը
- Կատարել երկարաժամկետ ներդրումներ մատչելի բնակարանաշինության ոլորտում՝ նպաստելով բնակարանային շուկաների կայունացմանը և այդպիսով մեղմացնելով անշարժ գույքի բնագավառում առկա չարաշահումների բացասական հետևանքները
- Նպաստել պատասխանատու գնումների գործելակերպերին և տեղական տնտեսական աճին ու զբաղվածությանը գործընկերությունների, հետազոտությունների և նորարարությունների միջոցով

Տեղական սոցիալական կայունություն

- Երաշխավորել, որ արժանավայել բնակարանը հասանելի լինի մատչելի գնով և այդպիսին ժամանակ ապագայում
- Կառավարել բնակֆոնդն այնպես, որ տները լինեն պատշաճ վիճակում, և որ վերանորոգումներն ու բարելավումները կատարվեն ըստ անհրաժեշտության՝ որոշման կայացման գործընթացում ընդգրկելով կենվորներին ու բնակիչներին
- Ապահովել անշարժ գույքի տիրապետման անվտանգությունը՝ հիմնվելով արդարացի և ապահով վարձակալման պայմանագրերի վրա, և աշխատել գործընկերների հետ՝ օգնելու բնակիչներին ստանալ այն աջակցությունը, որը նրանց անհրաժեշտ է իրենց տներում բնակելու համար
- Երաշխավորել, որ մենք բավարարում ենք ընտանիքների, ներառյալ առավել խոցելիների, բազմազան կարիքները, արդար վերաբերմունք ենք ցուցաբերում յուրաքանչյուր ներկա և ապագա բնակչի նկատմամբ և կանխում ենք խտրականության բոլոր ձևերի դրսևորումները
- Համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ երաշխավորելու բնակարաններից և հարակից ծառայություններից օգտվելու արդար հնարավորությունները և այն հանգամանքը, որ բնակարանների հատկացումը նպաստում է սոցիալական խառնուրդի մեծացմանը
- Տեղական մակարդակում աշխատել տեղական ինքնակառավարման մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ շրջանների ներսում խթանելու սոցիալական համախմբվածությունն ու պայքարելու սոցիալական և տարածական խտրականության դեմ

Էկոլոգիական կայունություն

- Նվազեցնել մեր բնակֆոնդի՝ շինարարության և արդիականացման աշխատանքների միջոցով շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունը մինչև ամենաբարձր հնարավոր չափորոշիչը
- Համագործակցել բնակիչների և նրանց ներկայացուցիչ կազմակերպությունների հետ՝ կրճատելու էներգիայի սպառումը մեր շենքերում և նվազեցնելու էներգետիկ աղբատությունը, կանխելու աղտոտումն ու խթանելու բնական պաշարների կայուն օգտագործումը
- Ներառել կանաչ ենթակառուցվածքներ և ընդհանուր կանաչ տարածքներ մեր բնակելի զանգվածներում և գործընկերություն հաստատել այլ կազմակերպությունների հետ՝ ստեղծելու էկոլոգիապես կայուն շրջաններ

Արդյունավետ կառավարում և արդար հարաբերություններ շահագրգիռ կողմերի հետ

- Ապահովել հուսալի հաղորդակցություն և թափանցիկություն որոշումների կայացման եղանակների ու հիմքերի, ինչպես նաև ծախսերի ու մատուցվող ծառայությունների վերաբերյալ
- Համագործակցել տեղական իշխանության մարմինների հետ, որպեսզի տուն փնտրողներն տեղյակ և լավ իրազեկված լինեն առկա հնարավորությունների մասին, և թափանցիկորեն իրականացնել բնակհատկացման գործընթացը
- Սատարել խոշոր շահառուների ներգրավվածությանը և իրական գործընկերություններին՝ հիմնվելով փոխադարձ հանձնառությունների և դերերի ու պարտականությունների հստակ սահմանման վրա
- Ուժեղացնել բնակիչների ինստիտուցիոնալ ու կառուցվածքային մասնակցությունը և նպաստել այս գործընթացի իրականացմանը՝ նրանց տալով անհրաժեշտ գիտելիքներ ու տեղեկություններ
- Հաշվետու լինել տարբեր շահագրգիռ կողմերի հանդեպ և հնարավորությունների դեպքում հետադարձ կապի ապահովման և կատարված միջոցառումների ու դրանց ազդեցության համատեղ գնահատման և վերլուծության նպատակով

Մարդկային ռեսուրսների պատասխանատու կառավարում

- Ապահովել բազմազանություն աշխատավայրում, ինչպես նաև՝ գենդերային հավասարություն
- Բոլորին տրամադրել հավասար հնարավորություններ և աշխատանքի արդար պայմաններ՝ առանց խտրականության
- Աջակցել աշխատանքի տեղավորմանն ու մասնագիտական զարգացմանը, խորհրդատվության, վերապատրաստման և ուսուցման հնարավորությունների միջոցով
- Ապահովել անվտանգ աշխատանքային միջավայր և բարեկեցություն աշխատավայրում, ներառյալ պատշաճ հավասարակշռությունն աշխատանքի և անձնական կյանքի միջև

Կազմակերպությունը՝

Ստեղծման վայրը՝ Թվականը՝

Ստորագրություն.....

Այս Վարվեցողության կանոնագիրը Սոցիալական բնակապահովման բնագավառում համագործակցության եվրոպական հանձնախմբի (Comité Européen de Coordination de l'Habitat Social, Housing Europe), Բնակիչների միջազգային միության (International Union of Tenants), «Ջարգացման հետազոտություններ բնակարանաշինության, բնակապահովման և սոցիալական նորարարության խթանման համար» (Developpement Etudes pour le Logement, la Promotion de l'Habitat, l'Innovation et le Social, DELPHIS) կազմակերպության և Եվրոպական պատասխանատու բնակապահովման շահագրգիռ կողմերի ֆորումի (European Responsible Housing Stakeholder Forum) համատեղ աշխատանքի արդյունք է:

Այն արտացոլում է մեր ԿՄՊ հանձնառությունն ու ավանդը Եվրոպայում Պատասխանատու բնակապահովման ոլորտում՝ «Պատասխանատու բնակապահովման մասին» եվրոպական հռչակագրի համապատասխան:

